**Նախագահ**
**Դիտեր Ֆ. Ուխդորֆ**
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական

# Սրբերը բոլոր ժամանակներում

Ես մանկության հիշողություններ ունեմ աշխարհի մի վայրի մասին, որը տարվա փոփոխվող եղանակների պատճառով կարող էր ծառայել որպես նկարներով մի բացիկ: Յուրաքանչյուր անցնող ամիս չքնաղ էր և հրաշալի: Կատարյալ ձմեռային օրվա ընթացքում ճերմակ ձյունը ծածկում էր սարերն ու քաղաքի փողոցները: Գարունը բերում էր մաքրող անձրևներ և կանաչ հագնված կյանքի պոռթկում: Ամռան ծույլ երկինքները պայծառ արևի շողերի համար ծառայում էին որպես հաճելի կապույտ կտավ: Եվ գրավիչ աշունը փոխակերպում էր բնությունը նարնջագույնի, դեղինի և կարմիրի հիանալի երանգների: Երեխա ժամանակ ես սիրում էի յուրաքանչյուր եղանակը, և մինչև հիմա սիրում եմ յուրաքնաչյուրի բնույթն ու յուրահատկությունը:

Մենք նույնպես ունենք եղանակներ մեր կյանքում: Մի քանիսը ջերմ ու հաճելի են: Մյուսները՝ ոչ: Որոշ օրեր մեր կյանքում այս օրացույցի նկարների նման գեղեցիկ են: Մինչդեռ, կան այնպիսի օրեր ու հանգամանքներ, որոնք պատճառում են կսկիծ և մեր կյանք են բերում հուսահատության, վրդովմունքի և դառնության խորը զգացումներ:

Ես վստահ եմ, որ եղել են պահեր, երբ մենք բոլորս մտածել ենք, որ լավ կլիներ բնակվել միայն կատարյալ եղանակների նկարներով լցված օրերով երկրում և խուսափել դրանց միջև եղած տհաճ ժամանակներից:

Բայց դա անհնար է: Ոչ էլ ցանկալի:

Երբ ես նայում եմ իմ սեփական կյանքին, ակնհայտ է, որ շատ անգամ ամենամեծ աճն ապրել եմ փոթորկոտ ժամանակների միջով անցնելիս:

Մեր իմաստուն Երկնային Հայրը գիտեր, որ որպեսզի Իր զավակները լինեն այնպիսի էակներ, ինչպիսին նախատեսված են դառնալ, նրանք իրենց ժամանակավոր մահկանացու կյանքի ընթացքում կարիք կունենան ճաշակել ձախորդության ժամանակաշրջաններ: Մորմոնի Գրքի մարգարե Լեքին ասել է, որ առանց հակադրության «արդարությունը չէր կարող իրագործվել» (2Նեփի 2.11): Իսկապես, կյանքի դառնությունն է, որ թույլ է տալիս մեզ հասկանալ, հակադրել և գնահատել դրա քաղցրությունը (տես ՎևՈւ 29.39; Մովսես 6.55):

Նախագահ Բրիգամ Յանգն այսպես է ասել. «Բոլոր խելացի էակները, ովքեր պսակված են փառքի, անմահության և հավերժական կյանքի պսակով, իրենց փառքն ու վեհացումը ստանալու համար պետք է անցնեն խելացի էակների համար նշանակված յուրաքանչյուր փորձության միջով: Ամեն դժբախտություն, որ կարող է գալ մահկանացու էակների վրա, տառապանք է բերում, . . . որպեսզի նախապատրաստի նրանց վայելել Տիրոջ

ներկայությունը: . . . Ամեն փորձություն և փորձառություն, որի միջով դուք անցել եք, անհրաժեշտ է ձեր փրկության համար»:[1]

Հարցը նրանում չէ, թե արդյոք մենք կճաշակենք ձախորդության ժամանակաշրջաններ, այլ նրանում, թե ինչպես կդիմակայենք փոթորիկներին: Կյանքի անընդհատ փոփոխվող ժամանակաշրջաններում մեր մեծ հնարավորությունն է Աստծո հավատարիմ խոսքից ամուր կառչելը, քանի որ Նրա խորհուրդը մեզ ոչ միայն կյանքի փոթորիկներին դիմակայելու համար է նախատեսված, այլ նաև առաջնորդելու մեզ անցյալում թողնել դրանք: Մեր Երկնային Հայրն Իր խոսքը տվել է Իր մարգարեների միջոցով՝—թանկագին գիտելիք՝ նախատեսված առաջնորդելու մեզ դժվարին ժամանակաշրջանների մարտահրավերների միջով դեպի հավերժական կյանքի անասելի ուրախություն և փայլուն լույս: Մեր կենսափորձի կարևորագույն մասն է կազմում ճշմարտությունից ու արդարակեցությունից ամուր կառչելու ուժ, խիզախություն և ողջամտություն զարգացնելը՝ չնայած մեր կրած հարվածներին:

Նրանք, ովքեր մտել են մկրտության ջրերը և ստացել են Սուրբ Հոգու պարգևը, իրենց ոտքերը դրել են առաքելության ճանապարհի վրա և Փրկչի հետքերին հաստատուն և հավատարմորեն հետևելու պարտականություն են ստացել:

Փրկիչն ուսուցանել է, որ արևը ծագում է «չարերի և բարիների վերայ, և . . . անձրև է [գալիս] արդարների և անիրավների վերայ» (Մատթէոս 5.45): Երբեմն մենք չենք կարող հասկանալ, թե ինչու են կյանքում դժվար, նույնիսկ անարդար բաներ տեղի ունենում: Բայց որպես Քրիստոսի հետևորդներ, մենք վստահում ենք, որ եթե մենք «փնտրենք ջանասիրաբար, աղոթենք անդադար և լինենք հավատացող, . . . բոլոր բաները միաժամանակ կգործեն [մեր] բարիքի համար, *եթե* [մենք] ուղիղ քայլենք» (ՎԵՈՒ 90.24; շեշտադրումն ավելացված է):

Որպես Նրա Եկեղեցու անդամներ, որպես Սրբեր, մենք ծառայում ենք ուրախությամբ և հաճույքով բոլոր եղանակներին և բոլոր ժամանակներում: Եվ եթե մենք այսպես վարվենք, մեր սրտերը կլցվեն սրբազան հավատքով, ամոքիչ հույսով և երկնային գթությամբ:

Մինչդեռ, մենք պետք է անցնենք բոլոր եղանակների միջով՝ և՛ հաճելի, և՛ ցավոտ: Բայց անկախ եղանակից, որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ, մենք կդնենք մեր հույսը Նրա վրա, մինչ կքայլենք դեպի Նրա լույսը:

Մի խոսքով, մենք Աստծո Սրբերն ենք՝ վճռած սովորել Նրա մասին, սիրել Նրան և սիրել մեր մերձավորին: Մենք ճամփորդներ ենք առաքելության օրհնված ճանապարհի վրա, և մենք հաստատուն կերպով կքայլենք դեպի մեր երկնային նպատակը:

Հետևաբար, եկեք լինենք Սրբեր գարնանը, ամռանը, աշնանն ու ձմռանը: Եկեք լինենք Սրբեր բոլոր եղանակներին:

**ՀՂՈՒՄ**

1. *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 261-62.

---

**ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ**

Առաջին Նախագահությունն ուսուցանել է. «Ամենամեծ քարոզներից մի քանիսը քարոզվում են օրհներգերի միջոցով» (*Հիմներ,* ix): Այս ուղերձը քննարկելիս՝ նրանց հետ, ում ուսուցանում եք, կարող եք երգել այս օրհներգերից կամ ձախորդությանը դիմակայելու հետ առնչվող երգերից մեկը. «Աստծո Սրբեր» (էջ. 6), «Տերն իմ հովիվն է» (էջ 108) կամ «Բոլորս դեպի առաջ» (էջ 243): Եթե ցանկանում եք, կիսվեք մի ժամանակահատվածի մասին, երբ ձեր կյանքի փոթորկոտ եղանակը վերածվել է օրհնության:

## ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

# Ես կարողացա մոռանալ իմ վիշտը

**Խուան Զու**

Երբ իմ ընկերներ Եղբայր Չենը և նրա կինը մկրտվեցին մեր ծխում, ես անչափ ուրախացա: Իրենց մկրտությունից մեկ տարի անց նրանք կնքվեցին տաճարում, և իրենց որդին, ով մահացել էր նախքան նրանց Եկեղեցուն միանալը, կնքվեց նրանց հետ: Հիանալի էր տեսնել Չեներին ավետարանում աճելիս:

Այնուհետև հաջորդ տարի Եղբայր Չենը զոհվեց ավտովթարից: Դեպքից հետո նրա մահը, կարծես, միշտ իմ մտքում լիներ և հաճախ հայտնվում էր իմ երազների մեջ: Ես վեր էի կենում արցունքների մեջ և կրկին ու կրկին հարցնում. «Ինչու՞: Ինչու՞ Տերը

թույլ տվեց, որ այսպիսի ողբերգություն տեղի ունենար: Ինչու՞ պետք է այսպիսի բան պատահեր այս գեղեցիկ ընտանիքի հետ»: Մի օր, երբ ես մտորում էի այդ հարցերի շուրջ, ես վերցրեցի ուսուցանման մի ձեռնարկ և կարդացի Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի հետևյալ խոսքերը (1895–1985).

«Եթե մենք դիտենք մահկանացու կյանքը որպես գոյության ամբողջականություն, ապա ցավը, վիշտը, ձախողումը և կարճ կյանքը կլիներ աղետ: Բայց եթե մենք նայում ենք կյանքին որպես հավերժական մի բանի, որը տարածվում է դեպի նախամահկանացու անցյալը և հետո դեպի հավերժական հետմահու ապագան, ապա բոլոր իրադարձությունները կարելի է դնել ճիշտ հեռանկարի մեջ: . . .

«Մի՞թե մենք չենք ենթարկվում գայթակղությունների, որպեսզի փորձենք մեր ուժը, հիվանդության, որպեսզի սովորենք համբերատարություն, մահվան, որպեսզի կարողանանք անմահանալ և փառավորվել»:[1]

Այդ պահին ես որոշեցի մոռանալ իմ վիշտը և նայել դեպի խոստացված և հնարավոր ապագան: Ես պատկերացրեցի Եղբայր Չենին երջանիկ վերամիավորված իր ընտանիքի հետ: Այդ տեսարանն ինձ խաղաղություն բերեց: Ես գիտեմ, որ Երկնային Հայրը մեզ կտա իմաստություն և խիզախություն, որպեսզի դիմակայենք ձախորդություններին:

*Հեղինակը Տարվանից է*

**ՀՂՈՒՄ**

1. *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* (2006), 15.

## ԵՐԵԽԱՆԵՐ

### Ծառայել բոլոր ժամանակներում

Նախագահ Ուխդորֆն ուսուցանում է, որ մենք պետք է «ուրախությամբ և հաճույքով ծառայենք բոլոր եղանակներին և բոլոր ժամանակներում»: Ո՞րոնք են ձմռան ընթացքում ուրիշներին ծառայելու ուղիները: Ո՞րոնք են գարնան ընթացքում ծառայելու ուղիները: Ի՞նչ կասեիք ամռան և աշնան մասին: Գրեք ձեր մտքերը տարվա յուրաքանչյուր եղանակի մասին: Դուք կարող եք փորձել կիրառել ձեր մտքերից մեկն այս ամսվա մեջ:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/13: Թարգմանության հաստատումը. 6/13: *First Presidency Message, September 2013.* Armenian.-ի թարգմանությունը 10669 201

# Ինքնապահովում

*Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք reliefsociety.lds.org:*

**Հավատք, Ընտանիք, Սփոփանք**

Ինքնապահովումը մեր և մեր ընտանիքի հոգևոր և ֆիզիկական բարեկեցությունն ապահովելու կարողությունը, նվիրվածությունն ու ջանքն է:[1]

Երբ մենք սովորում և կիրառում ենք ինքնապահովման սկզբունքները մեր տներում և համայնքներում, մենք հնարավորություն ենք ունենում հոգալ աղքատի և կարիքավորի մասին և օգնել մյուսներին ինքնապահովող դառնալ, այնպես որ նրանք կարողանան դիմակայել ձախորդության ժամանակաշրջաններին:

Մենք մեր ընտրությունն օգտագործելու արտոնություն ու պատասխանատվություն ունենք հոգեպես և ժամանակավորապես ինքնապահովող դառնալու համար: Խոսելով հոգևոր ինքապահովվածության և Երկնային Հորից մեր կախվածության մասին՝ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ուսուցանել է. «Մենք դարձի ենք գալիս և դառնում հոգեպես ինքնավստահ, երբ աղոթքով ապրում ենք ըստ մեր ուխտերի՝ հաղորդությունն արժանավայել ճաշակելու միջոցով, տաճարային երաշխավորագրին արժանի լինելով և զոհաբերելով՝ ուրիշներին ծառայելու համար»:[2]

Երեց Հեյլսը խորհուրդ է տվել մեզ դառնալ ինքնապահովված ֆիզիկապես, «որը ներառում է ձեռք բերելը բարձրագույն կրթություն կամ մասնագիտական ուսուցում, աշխատել սովորելը և ապրելը մեր միջոցների սահմաններում: Այժմ խուսափելով պարտքից և գումար խնայելով՝ մենք պատրաստվում ենք լիաժամկետ եկեղեցական ծառայության գալիք տարիների ընթացքում: Ֆիզիկական և հոգևոր ինքնապահովման նպատակն է մեզ ավելի բարձր դիրքի վրա դնելը, որպեսզի կարողանանք բարձրացնել կարիքի մեջ գտնվողներին»:[3]

## *Սուրբ գրություններից*

Մատթէոս 25.1–13; 1 Տիմոթէոս 5.8; Ալմա 34.27–28; Վարդապետություն և Ուխտեր 44.6; 58.26–29; 88.118

## *Մեր պատմությունից*

Վերջին Օրերի Սրբերի Սոլթ Լեյքի Հովտում հավաքվելուց հետո, որը լքված անապատ էր, Նախագահ Բրիգամ Յանգը ցանկացավ, որ նրանք բարգավաճեին և հաստատեին մշտական տներ: Սա նշանակում էր, որ Սրբերը հմտություններ սովորելու կարիք ունեին, որը թույլ կտար նրանց դառնալ ինքնապահովված: Այս ջանքում Նախագահ Յանգը մեծ վստահություն ուներ կանանց ունակությունների, տաղանդների, հավատարմության և պատրաստակամության նկատմամբ, և նա խրախուսում էր նրանց ստանձնել որոշակի նյութական պարտականություններ: Թեև Սփոփող Միության քույրերի պարտականությունները հաճախ տարբերվում են այսօր, սկզբունքները մնում են նույնը.

**1.** Սովորել սիրել աշխատանքը և խուսափել անգործությունից:

**2.** Ձեռք բերել ինքնազոհաբերության ոգի:

**3.** Ընդունել անձնական պատասխանատվություն հոգևոր ուժի, առողջության, կրթության, աշխատանքի, ֆինանսների, սննդի և կենսական այլ անհրաժեշտությունների համար:

**4.** Աղոթել հավատքի և քաջության համար՝ մարտահրավերների հանդիպելիս:

**5.** Ամրացնել նրանց, ովքեր աջակցության կարիք ունեն:[4]

**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 9.5.1:
2. Ռոբերտ Դ. Հեյլս, «Ուշքի գալով. հաղորդությունը, տաճարը և ծառայության մեջ զոհաբերելը», *Լիահոնա*, մայիս 2012, 34:
3. Ռոբերտ Դ. Հեյլս, «Ուշքի գալով», 36:
4. Տես *Իմ պրքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 51:

### *Ի՞նչ կարող եմ ես անել:*

**1.** Ինչպե՞ս եմ ես օգնում այն քույրերին, ում մասին հոգ եմ տանում, գտնել լուծումներ իրենց ֆիզիկական և հոգևոր կարիքների համար:

**2.** Բարձրացնու՞մ եմ ես արդյոք իմ հոգևոր ինքնավստահությունը հաղորդությանը պատրաստվելու և ծառայելու համար զոհաբերելու միջոցով:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում:
Անգլերենի հաստատումը. 6/13: Թարգմանության հաստատումը. 6/13: *Visiting Teaching Message, September 2013*. Armenian.-ի թարգմանությունը: 10669 201